ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի և Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի Գյումրու գրասենյակի միջև

ք. Գյումրի «15» ապրիլի 2022թ.

Հայաստանի Հանրապետության **«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը** (այսուհետ՝ ՇՊՀ), ի դեմս ռեկտոր **Երվանդ Սերոբյանի**, ով գործում է ՇՊՀ Կանոնադրության հիման վրա՝ մի կողմից և **Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղը**, ի դեմս տնօրեն **Հարութ Ներսեսյանի**, որի կողմից 05.10.2021թ.-ին տրված լիազորագրով հանդես է գալիս Գյումրու գրասենյակի ներկայացուցիչ (այսուհետ՝ ԱՀԱԸ Հայաստանի մասնաճյուղ, Գյումրի) **Կարեն Մանուկյանը**, կարևորելով երիտասարդների դերը ՀՀ կրթական, սոցիալական կառույցների զարգացման ու կայացման գործում և առաջավոր փորձի փոխանակման անհրաժեշտությունը, կնքեցին համագործակցության հուշագիր (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

1. Հուշագրի առարկան

1.1. Հուշագրի առարկան Կողմերի համագործակցության նպատակի, գործընկերության հիմնական ուղղությունների, Կողմերի իրավունքների և պարտականությունների սահմանումն է:

2. Հուշագրի նպատակը և համագործակցության հիմնական ուղղությունները

2.1.Հուշագրի նպատակը Կողմերի միջև կրթական, սոցիալական և մշակութային ոլորտներում գործընկերային հարաբերությունների հաստատումն է,

համագործակցության ծրագրերի իրականացումը՝ Հուշագրի 2.2. կետում նախատեսված ուղղություններով:

2.2.Կողմերի համագործակցության հիմնական ուղղություններն են.

ա/ ՇՊՀ-ում և ԱՀԱԸ Գյումրու գրասենյակում իրականացվող կրթական ծրագրերի մասին տեղեկությունների տրամադրում, համատեղ կրթական ծրագրերի իրականացմանն ուղղված աշխատանքների քննարկում և կազմակերպում,

բ/ ԱՀԱԸ Գյումրու գրասենյակում գործող կրթական, սոցիալական և մշակութային ծրագրերում ՇՊՀ ուսանողների համար պրակտիկայի կազմակերպում,

գ/ կրթական ծրագրերի և/կամ առանձին դասընթացների համատեղ մշակում և իրականացում,

դ/ սոցիալական աշխատանքի պրակտիկ փորձի ներկայացում ՇՊՀ սոցիալական բաժնի ուսանողներին՝ տեսական դասերին զուգահեռ:

ե/ ԱՀԱԸ Գյումրու գրասենյակի աշխատակազմի և կամավորների համար մասնագիտական վերապատրաստումների կազմակերպում ՇՊՀ դասախոսների կողմից,

զ/ համատեղ կրթական, գիտահետազոտական ուղղվածության դրամաշնորհային ծրագրերի իրականացում,

ը/ Կողմերի իրականացրած այլ կրթական, գիտական, մշակութային ծրագրերին, կազմակերպած միջոցառումներին մասնակցություն:

3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1.Կողմերն իրավունք ունեն հանդես գալու Հուշագրով նախատեսված միջոցառումների կազմակերպման ու անցկացման նախաձեռնողի դերում:

3.2.Համագործակցության նպատակով, Հուշագրի հիման վրա, Կողմերը պարտավորվում են.

ա/ ժամանակին միմյանց փոխանցել համապատասխան տեղեկատվություն, որը վերաբերում է Հուշագրով նախատեսված համատեղ ծրագրերի ու միջոցառումների անցկացմանը,

բ/ անվճար հիմունքներով խորհրդատվություն տրամադրել ծրագրի ու միջոցառումների կազմակերպման ու անցկացման հարցերում,

գ/ ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական բազա և պայմաններ՝ համատեղ ծրագրեր իրականացնելու և միջոցառումներ անցկացնելու համար,

դ/ նախօրոք տեղյակ պահել միմյանց համագործակցության ընթացքում առաջացող խնդիրների միասին և համատեղ ուժերով ապահովել դրանց լուծումը:

4. Հուշագիրն ուժի մեջ մտնելու և գործողության ժամկետները

4.1. Հուշագիրը բաղկացած է 3 էջից և ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

4.2.Հուշագիրը կազմված է հայերեն երկու հավասարազոր օրինակներից, և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

4.3. Հուշագիրը կնքվում է 5 տարի ժամկետով: Ժամկետը լրանալուց հետո, եթե որևէ Կողմից այլ առաջարկություն չի լինում, ապա Հուշագրի գործունեության ժամկետն ինքնըստինքյան շարունակվում է ևս 5 տարի:

4.4. Հուշագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

4.5. Կողմերից մեկի նախաձեռնությամբ Հուշագրի դադարեցման անհրաժեշտության դեպքում մյուս Կողմը պետք է տեղեկանա այդ մասին գրավոր՝ ենթադրյալ լուծման պահից առնվազն 10 օր առաջ:

5. Եզրափակիչ դրույթներ

5.1.Հուշագիրը Կողմերի համար որևէ ֆինանսական պարտավորություն չի առաջացնում:

6. Կողմերի իրավաբանական հասցեները

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ
Հասցե՝ ք. Գյումրի, փ. Պ. Սևակի-4
Էլ. հասցե՝ info@shsu.am
Հեռ.՝ +374 312 6 94 94

Ռեկտոր՝ Երվանդ Սերոբյան

Կ.Տ.

Ամերիկայի Հայ Ավետարանչական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ
Հասցե՝ ք. Գյումրի, փ. Սայաթ Նովայի 6/9
Էլ.հասցե՝ amaa.armenia@amaa.am
karen.manukyan@amaa.am
Հեռ.՝ +374 312 5 23 31

ԱՀԱԸ Հայաստանի մասնաճյուղի ներկայացուցիչ՝ Կարեն Մանուկյան

Կ.Տ.